

Ա. Բ. Կարինյան

ՄԵԾ ՀՈՒՄԱՆԻՍՏ-ՄՏԱԾՈՂ ՇԵՎՁԵՆԿՈՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ*

Երբ 1909-ին Մաքսիմ Գորկին կազմում էր համաշխարհային մշակույթի ներկայացուցիչների նախնական ցուցակը և առաջարկում էր հրատարակել բանաստեղծների, գրագետների, գիտնականների ընտիր երկերի թարգմանությունը, նա ամենից առաջ պաշտպանում էր կարևորագույն մի ելակետ։ Գորկու կարծիքով բարձր մշակույթի բոլոր առաջավոր մունետիկները պետք է դառնային թե՛ եղբայրական սովետական ժողովուրդների և թե՛ ազատասեր ու խաղաղասեր բոլոր ժողովուրդների բարեկամական կապերի վարճացմանը զորավոր թափ հաղորդող ուժգին ազդակներ։ Մ. Գորկու համոզմամբ հրաշունչ հեղափոխության օրերին և հետագա շրջանում գրականության, գիտության, համայն մշակույթի ջահակիրները կարող էին օգնել հեղափոխական կարգեր կառուցողներին և նպաստել ժողովրդական զանգվածների կուլտուրական մեծ վերելքին։

Ելնելով ահա շեշտված գիտակետից Մ. Գորկին կոչ էր անում առաջավոր սովետական բանասերներին և պատմաբաններին բացահայտել և ցուցադրել առանձին թարգմանություններին և ժողովածուներին կցված աշխատությունների մեջ՝ անվանի գրագետների և մտածողների կապերը ժողովրդի, պատմական որոշ փուլի, սոցիալական միջավայրի և իրականության հետ։

Հայտնի է, որ Վ. Ի. Լենինը արձագանքել է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության տակավին առաջին օրերին Մ. Գորկու նախաձեռնությանը և գրական-մշակութային ծավալուն ծրագիրներին։ Երբ Մ. Գորկու շուրջը համախմբված գրագետների և գիտնականների ջանքերով կազմված երկու մեծ ծրագիրներ-կոնսպեկտները լույս են տեսնում, սովետական գրողներն անցնում են կոնկրետ աշխատանքի և պատրաստում են բազմազան աշխատություններ և թարգմանություններ։ Կարճ ժամանակվա ընթացքում նման հրատարակությունները հիրավի դառնում են կուլտուրական նոր շինարարությանը օժանդակող կարևոր զենքեր։ Գրողներին միանում են առաջավոր գիտնականները։ Հակառակ կյանքից կտրված գործիչների՝ նույն այդ օրերին ընդգծվում է, որ գաղափարական-մշակութային ակնարկված ձեռնարկներով պետք է մեծագույն թափ հաղորդել առանձնապես արևելյան ժողովուրդների և այսպես կոչված «երկրորդ կարգի» ցեղեր համարվող ճնշված ժողովուրդների մշակույթի ուսումնասիրության ուղղությամբ ձեռնարկված աշխատանքներին և գիտական պրպտումներին։

Քիչ հետո, դարձյալ Մ. Գորկու շուրջը համախմբված գրողների ջանքերով, շեշտվում է անվանի գեղագետների և գրագետների հոբելյանների մեծագույն նշանակությունն ու դերը որպես ժողովուրդների բարեկամությանը նպաստող գաղափարական ուժգին գործոն։ Թե որքան մեծ դաստիարակչական նշանակու-

* Տ. Գ. Շելինկոյին նվիրված գիտական նստաշրջանում կարդացված զեկուցման համառոտ շարադրանքը։

թյուն է ունեցել այդ ամենը և որքան ուժեղ արձագանքներ է ստեղծել թե՛ Սովետական Միության մեջ և թե՛ դեմոկրատական բազմաթիվ երկրներում, ավելի քան լավ է հայտնի:

Այնուամենայնիվ անգամ այսօր կեղծ-գիտության անունից շաղակրատող «որոշ գործիչներ արևմտյան-կապիտալիստական երկրներում անբավականություններ են արձագանքում արվեստին, գրականությանը, գիտությանը, գաղափարական, հումանիստական դիրքերից մոտեցող մտածողներին: Իշխող դասակարգերի իմաստասիրության սկզբունքները պաշտպանող գործիչները գրեթե միշտ ջանացել են անցյալի կուլտուրայի վավերագրերը նկարագրել աղավաղված և տենդենցիոզ լույսով: Միաժամանակ նույն այդ գործիչները միշտ ճիգ են արել ծառանալ ընդդեմ լենինյան գրականագիտության դրույթների և անցյալի հումանիստ-մտածողներին դարձնել դաժան անցյալի բռնակալական կարգերի բացահայտ կամ քողարկված պաշտպաններ:

Ահա նման բոլոր կեղծ-գիտուններին շատ վճռական հարված են հասցրել ամենից առաջ ռեալական դեպքերն ու վավերագրերը:

Անհրաժեշտ է առանց վարանումների նշել, որ իրական փաստերը ստիպում են անցյալի հումանիստների իսկական նկարագիրը աղարտող բոլոր գործիչներին կամ սխալ կերպով մոտենալ փաստերին կամ էլ ծանրանալ անկարևոր և երկրորդական էջերի վրա: Այդ ձևով բանաստեղծի, վիպագրի, գիտնականի «կյանքի և գործի» ճշգրիտ բնութագրման փոխարեն հիշատակված գործիչները ճիգ են արել ոչ միայն իդեալիստական իմաստասիրության դիրքերից մոտենալ ըմբոստ մտածողներին, այլև բռնակալ ուժերի դեմ ծառացող գրողներին—Բայրոնին, Դիկենսին, Սերվանտեսին կամ Սվիֆտին, նման ուրիշ մտածողներին դարձնել իդեալականացրած և հանդուրժելի սևփականատիրական կարգերի փաստաբաններ ու պաշտպաններ:

Մեծ ուկրաինական հումանիստ-մտածող Տարաս Շևչենկոյի կյանքի և գործի պատմության էջերն, ինչպես հայտնի է, շատ ուշագրավ են այն կողմից, որ բացահայտորեն վճռական և ջախջախիչ հարված են հասցնում շեշտված տիպի բոլոր տեսաբաններին և կեղծ գիտուններին: Այդ «գիտունները» քանդել, քողարկել ժողովրդական ստեղծագործությունների ամենից հիմնական և հատկանշական կողմերն, իհարկե, չէին կարող:

Բավական է միայն ուշագրությամբ կարդալ Շևչենկոյի անսահման զայրույթով համակված երգերը, ուսումնասիրել նրա վիպական գործերն և միշտ իմաստալից նկարները, վերջապես հետևել կյանքի էջերին, որպեսզի բացահայտ դառնա անցյալի հին աշխարհի, բռնակալների ու բոլոր սև ուժերի դեմ միշտ մարտնչող—ըմբոստ հեղափոխական երգչի գիմաստվերը: Ահա ինչու առանց վարանումների բոլոր բարեխիղճ ընթերցողներն արձանագրել են անառարկելի մի փաստ: ...Տարաս Շևչենկոյի թե՛ իսկական նկարագիրը և թե՛ ստեղծագործությունը չի կարող երբևէ սիրելի լինել ժողովրդին ճշող բռնակալների ու դրանց սպասավորող ստոր ու խաբեբա մունետիկների համար...

Այդ պատճառով Շևչենկոյի ընթերցողը չի կարող երբևէ սահմանափակվել սոսկ մեծ ժողովրդական տրիբունի բանաստեղծությունները կարդալով: Երգերից հետո այդ ընթերցողը միշտ անցնում է արդեն վիպակների քննարկման, վիպակներից հետո ուսումնասիրում է խոհուն գրողի նամակները, քիչ հետո նաև նրա կյանքի էջերը նկարագրող վավերագրերը կամ մոտիկ ծանոթների

հուշերը և վերջապես հումանիստ-մտածողի մտահայեցության բարդ ու նրբին երանգները ցուցահանող միշտ իմաստալից նկարները: Այդ ամենը ցույց է տալիս անզամ միամիտ ընթերցողներին, որ այդպիսի գործի ստեղծագործությունների իմաստն ու ուժը, ինտոնացիան և ուղղությունը չի կարող հարապատ ու սիրելի լինել «անկոխ վապրումների» — երգիչների, ժողովրդից կտրված «անաղարտ» կամ «մաքուր» արվեստի «տեսաբանների» համար:

Շեչենկովի կյանքն ու հեղափոխական գործունեությունը, նրա կապերը Դոբրուլյուբովի, Չերնիշևսկու, Սերակովսկու, նման ուրիշ գործիչների հետ, նրա երգերն և երգերի համայն հանրագումարը, վերջապես բազմաթիվ նկարների՝ զրավյուրների և օֆորտների զաղափարական-գեղարվեստական հատկանիշները թելադրում են ամենից առաջ նկատել հումանիստ-մտածողի դիմապատկերը: Ավելի քան ականերն է, որ ուկրաինական ժողովրդի հանճարեղ զավակի իսկական նկարագրի ճշգրիտ բնութագրման համար մենք պիտի հենվենք հիշատակված բազմազան հանգամանքների ու փաստերի ընդհանուր հաճախումների վրա: Առանձնապես կարևոր է նշել, որ Շեչենկովի ներհուն բանաստեղծությունների կողքին պետք է հիշատակվեն առաջին հերթին նաև նրա հայտնի զրավյուրներն ու օֆորտները, բոլոր այն ռեալիստական նկարները, որոնք ժամանակին շատ բարձր են գնահատվել հայտնի նկարիչների — Բրյուլլովի, Վենեցիանովի, Տոլստոյի և ուրիշ ղեկավարների կողմից:

Շեչենկովի նկարները եղել են բարձր գեղարվեստական ստեղծագործություններ և միաժամանակ միշտ իմաստալից աշխատություններ: Ցարական ղեկավարության համհարդներին համենայն դեպս լավ էր հայտնի, որ ըմբոստ երգչի շատ և շատ նկարները ուղղված են իշխող կարգերի դեմ և հագեցված են հեղափոխական մարտաշունչ տրամադրությամբ: Ահա հենց այդ հանգամանքն էլ թելադրել է ցարին հատուկ կարգադրությամբ շեշտել, որ աքսորական սալդաթ Շեչենկովին անհրաժեշտ է արգելել գրել և նկարել:

Անտեղի չէր լինի գուցե և այսօր նշել նաև մի ուրիշ փաստ: Շեչենկոն, ինչպես պատմում են նրա ծանոթները, մեղմ ձայն ուներ և մեծ տպավորություն էր թողնում, երբ երգում էր՝ հույզով լեցուն, կես-ուրախ, կես-տխուր ժողովրդական երգերը: Վաղեմի ուկրաինական «գումկաները» նա լավ էր ուսումնասիրել և իր բանաստեղծությունների ուրույն կառուցվածքն ու ինտոնացիան կերտել է նույն այդ «գումկաների» նշմարելի ազդեցության ներքո:

Երբ նա աքսորից վերադառնում է, Մոսկվայում նրան սրտագին զգացումով է ողջունում, ի միջի այլոց, ականավոր սլավոնաֆիլ գրագետ Ակսակովը: Հեղափոխական շարքերից հեռու էր կանգնած այդ գործիչը:

Չնայած դրան նա ցուցահանում է անկեղծ ու ջերմ վերաբերմունք ըմբոստ հումանիստի համբավ վայելող երգչի նկատմամբ: Ակսակովի բնականորեն — Ակսակովի աղջիկը, տոգորված ինտիմ զգացումով, աշխատում է ընդգծել պոետի նկատմամբ մեծ հարգանք և երգում է ուկրաինական գեղեցիկ ու նրբին երգերը...

Այնուամենայնիվ, թե՛ Ակսակովների, թե՛ Շեչենկովի բարեհոգի ուրիշ ծանոթների համար, անզամ այդ օրերին, անհասկանալի և անհանդուրժելի էր մեծ հումանիստ-մտածողի ստեղծագործությունների զաղափարական բովանդակությունը և մանավանդ ականերուրեն նշմարվող ցասումնալից բողոքին հատուկ ինտոնացիան: Այդ մասին ուշադրավ դիտողություն է նետել Ի. Ս. Տուրգենևը տակավին պոետի վերադարձի օրերին:

Պետք է ասել, որ Շեչենկոյի շատ և շատ նկարները նույնպես սևզմ կոչորիտ ունեն։ Առաջին նվազ այդ պատճառով հեղափոխական բանաստեղծի իսկական նկարագիրը հիշատակված զեղակերտ նկարների մեջ այնքան էլ ցայտուն կերպով չի նշմարվում։ Ներհուն բանաստեղծ-մտածողի դիրքերից մոտենալով նվիրական հայրենի վայրերի զեղեցիկ բնանկարին, հարադատ ու սիրելի ուկրաինական ժողովրդին Շեչենկոն աշխատում էր կերտել ամենից առաջ բարձր տեխնիկայով աչքի ընկնող զեղարվեստական-նվաճային ստեղծագործություններ։ Նրա տաղանդավոր գրավյուրների և օֆորտների «արտաքին» հատկանիշները, իհարկե, կարող էին զրավել և պետք է զրավելին անվանի արվեստագետ-նկարիչների և քանդակագործների առանձնահատուկ ուշադրությունը։

Սակայն և այնպես ուկրաինական և ուսումնասիրողի սոցիալական պատմության էջերն ուսումնասիրողի համար այսօր թերևս ավելի հատկանշական «վավերագրերի» արժեք ունեն մեծ ժողովրդական տրիբունի նկարների թևատիկան և իմաստալից բովանդակությունը։ Միշտ այրող կենսական մոտիվներին արձագանքող Շեչենկոն, իհարկե, դիտավորություններ է ջանացել կերտել գեղջուկ-աշխատավորների ներհուն պորտրետներ, արքայական-սալդաթների սիրտուտներ, խոշտանգվող կալանավորների կերպարներ և արևելյան ժողովուրդների՝ զազախների-կիրգիզների ներկայացուցիչների կենդանի նկարները։

Ոչ մի բանասեր-գրականագետ չի կարող անուշադրության մատնել մեծ գրողի նկարների զաղափարական և իմաստասիրական նշանակությունը։ Շեչենկոն նկարները նույնչափ կարևոր նշանակություն ունեն Շեչենկոյի բանաստեղծությունների լուսարանության համար, ինչպես և գրական ստեղծագործությունները նրա բազմազան նկարների ճշգրիտ մեկնաբանության համար։ Եթե բանաստեղծությունների մեջ արժարժված թևաներն ու մոտիվները թևադրում են վերհիշել, որ ժամանակին արվեստի մեծ վարպետների նկարները՝ զրավյուրները և օֆորտներն ուսումնասիրող Շեչենկոն կարող էր ավելի մեծ չափով ազդվել Հոլբայնի, Դյուրերի, Ռեմբրանդի նման մեծ զեղագետների հանճարեղ ստեղծագործություններից, ապա նրա շատ նկարների ոչ միայն բարձր արվեստը, այլ առանձնապես իմաստն ու զաղափարայնությունը ստիպում են նույնիսկ «միամիտ» ընթերցողներին հաշվի առնել ռեալիստական արվեստի սկզբունքները պաշտպանող մեծ հումանիստ-մտածողի դիրքորոշման կարևորագույն հատկանիշները։

Պատահական չի կարելի համարել այն, որ արքայավայրում Շեչենկոն դիտավորություններ կերտել է արևելյան զաղախ ժողովրդի մանուկների արտահայտիչ և անչափ ազդու այն «պորտրետները», որոնց կողքին հենց դուռն մոտ մենք տեսնում ենք սալդաթ-արքայականի դիմաստվերը։ Նույն այդ իմաստալից նկարը Շեչենկոն, ինչպես հայտնի է, պատրաստել էր մայրաքաղաքում ապրող իր վաղեմի ծանոթ Տոլստոյի կնոջ համար։ Միմիայն կրակոտ, բմբուս և հումանիստ-բանաստեղծ-մտածողը կարող էր այդքան յուրահատուկ ձևով անուշադրության մատնել ամեն մի «էտիկետ» և մոռանալ, որ բարձր դիրք ունեցող կոմս Տոլստոյի հյուրերի շրջանում նման թևաներ արժարժող նկարները դիտողների շրջանում կարող էին լինել նաև դաժան ցարի սպասավորների հետ կապված ստոր գործիչներ։

Եթե արքայական-սալդաթների, խոշտանգվող կալանավորների, արևելյան, էնշված ժողովուրդների—զազախների ու կիրգիզների նկարներից մենք անց-

նենք մեծ գրողի «Կովկաս» պոեմին, դարձյալ կտեսնենք առաջին հերթին բրոնաակալության դեմ ծառացող բմբուստ երգչի դեմքը: «Լեռներից դեն լեռներ ամպով են սքողված, առատ են վշտերով, արյամբ են ողողված»:

Այնտեղ հեուց Պրոմեթեյին
Արծիվն է միշտ պատժում
Ամեն մի օր կոզր կտցում
Ու սիրտն է հոշոտում,
Հոշոտում է, բայց կենարար
Արյունը չի խմում,
Սիրտը նորից կյանք է առնում,
Նորից է ծիծաղում,
Ջի մոռանա և մեր հոգին,
Ազատությունը վես,
Դաշտ չես հերկի ծովի տակին,
Որքան ազատ լինես...

(Թարգմ. Դ. Սարյան):

Շեչենկոն կարող էր պոլ ընդդեմ է նաև—«Եվ կենդանի խոսքն ու հոգին չես շղթայի դու...»:

Հետագայում՝ իր «Օրագրի» մեջ նա, ցարական բռնակալության վայրագ դադության քաղաքականության բացահայտ ու մոկելին դատափետմանը նվիրված էջերում, նկարագրում է ավերված վայրերն ու ճնշված աշխատավորների ծանր կացությունը:

Գործույրով իրեն հատուկ հեռատեսությամբ նկատել էր, որ ժողովրդայնության և հումանիստական մտահայեցողության հատուկ կնիքը շատ ուժեղ է Շեչենկոյի անգամ «Երգալ» բանաստեղծությունների մեջ:

Չերխչեսկու և Նեկրասովի համար նույնպես թանկ ու նվիրական էր ամենից առաջ ուսույցի հումանիզմի ողջունը պատգամներին արձագանքող բողոքի սուր ինտոնացիան:

Առաջավոր ուս երիտասարդության համար, մայրաքաղաքում ապրող արմատական հովերով տարված մտավորականության համար մոտիկ և հարապատ էր «Սովրեմեննիկի» շուրջը համախմբված գործիչների հետ կապված Շեչենկոն: Այդ փաստը ժամանակին արձանագրել են 19-րդ դ. 50—60-ական թվականների գործիչները: Դրանցից Շտակենշեյդերը, ի միջի այլոց, կարևոր է համարել նույնիսկ նշել, որ աքսորավայրից եկած Շեչենկոյին մայրաքաղաքի մտավորականության առաջավոր շարքերը շատ ավելի ջերմ են ողջունել, քան Դոստոևսկուն: Ավելի քան ակներև է, որ մեծատաղանդ վիպագրի բարձր արվեստը գնահատող ընթերցողների որոշ շարքերի համար «հասկանալի» և հանդուրժելի չի եղել Դոստոևսկու շրջադարձը դեպի ուսուցիչի մտածողների բաստիոնը: Հարգանքով ողջունելով աքսորավայրից եկած վիպագրին առաջավոր ընթերցողներն, ըստ երևույթին, չեն կարողացել ու չեն ցանկացել սքողել իրենց անբավականությունն ու որոշ «տարակուսանքներ»¹...

Սովետական բանասերների նորագույն հետազոտություններն և գիտական էքսկուրսները բացահայտել են կարևոր շատ նորություններ, որոնք թվադրում են առաջին հերթին ծանրանալ ուղարկական մեծ գրողի մտահայեցողության հումանիստական բարձր հատկանիշների վրա:

¹ Անհրաժեշտ է հիշել, որ մեմուարների հեղինակ Շտակենշեյդերը բավական հեռու էր կանգնած «Սովրեմեննիկի» շուրջը համախմբված գործիչներից:

Այդ նոր աշխատությունների մեջ ժամանակին բարձր է գնահատվել անվանի գրող Մարինետա Շահինյանի բարձրարժեք դեկտորական դիսերտացիան՝ Այսօր ես չէի ցանկանա կրկնել այն դիտողությունները, որոնք այդ աշխատության տակավին առաջին հրատարակության առթիվ նետվել են իմ կողմից սովետահայ մամուլի էջերում: Կուզենայի միայն նշել, որ Մ. Շահինյանի արժեքավոր հետազոտության մեջ հիրավի նշանակալից են ուշագրավ տվյալները գիտական էքսպեդիցիայի մասնագետների հետ ունեցած Շեչենկոյի հարաբերությունների մասին, ինչպես նաև ուկրաինական գյուղերի առանձին աշխատավորների կողմից Մ. Շահինյանին հաղորդված ուրույն հուշերի մասին, հուշեր, որոնք նորից և նորից նկարագրում են ժողովրդի հետ կապված ու ժողովրդի համար միշտ նվիրական մեծ հումանիստ-մտածողի դեմքը...

Քիչ առաջ հիշատակված փաստերին անհրաժեշտ կլինեն կցել ոչ միայն սովետական բանասերների և պատմաբանների ջանքերով հրապարակված նոր տվյալներն ուկրաինական ազգային-ազատագրական շարժումների և Շեչենկոյի ու հեղափոխական դեմոկրատների հարաբերությունների մասին, այլ նաև ուշագրավ այն թուուցիկ դիտողությունները, որոնք ցրված են մեծ հեղափոխական հումանիստի հանրահայտ «Օրագրի» էջերում: Հասարակական մտքի յուրաքանչյուր պատմաբան, իհարկե, պարտավոր է մեծ ուշադրությամբ ուսումնասիրել բոլոր այն վավերագրերն և հետազոտությունները, որոնք բնութագրում և լուսաբանում են Շեչենկոյի կապերը ընդհատակյա հեղափոխական խմբակների մասնակիցների հետ:

Այնուամենայնիվ, նույն այդ աղբյուրների կողքին շատ ավելի կարևոր նշանակություն ունեն մեծ գրողի «Օրագրի» էջերում ցրված, անգամ հակիրճ, այն տողերը, որոնք արտահայտում են հենց գրողի բացահայտ ու նշանակալից հայացքներն և մտորումները: «Օրագրի» էջերում գծված է համենայն դեպս շատ ուշագրավ կերպով միշտ խոհուն մեծ հումանիստ-հեղափոխի նկարագիրը:

Նշանակալից են ցարական Ռուսիայի գաղութային քաղաքականության դատափետմանը նվիրված տողերը և ապա արևելյան ճնշված ժողովուրդների մասին նետված ակնարկը: Ընթերցողները չեն կարող երբեք անուշադրության մատնել, որ Շեչենկոն դիտավորությամբ է ընդգծել գյուղացիական-ժողովրդական մեծ սոցիալական ապստամբության պարագլխի—Ստենկա Ռազինի այնքան ուշագրավ պատմական դերը: Նույնչափ կարևոր պետք է համարել նաև թուուցիկ դիտողությունն այն մասին, որ ինքը ծրագրել է կերտել հատուկ պոեմ «Սատրապն ու դերվիշը» վերնագրով: Եթե նկատի առնենք, որ աքսորավարում Շեչենկոն որոշ կապեր է ունեցել արևելցի բնակիչների և լեհ աքսորականների հետ, որ նրան ծանոթ էին պուշկինյան տողերը Սադիի մասին, ապա կարելի է առաջադրել նաև մի ենթադրություն: Ըստ երևույթին Շեչենկոյին ծանոթ են եղել եթե ոչ ռուս ականավոր արևելագետների ականակներն ու խոսքերը խաբանիի նման հումանիստի մասին, ապա գոնե նրան հայտնի էին արևելացիների գրույցները հնօրյա Արևելքի իմաստասերների՝ Ավիցեննայի, Բիրունիի, Ջամիի, Նավոյիի, և կամ դրանց ուղեգծին ձայնակցող արևելյան հնօրյա «դերվիշ»-ների մասին: Թեմայի ընտրությունն ինքնին արդեն թելադրում է նման կարծիք առաջադրել:

Այսպես թե այնպես «Օրագրի» շատ էջերը ցույց են տալիս, որ մեծ գրողը լիբերալների ուղեգծից շատ հեռու էր կանգնած: Գուցե դրա համար էլ նա դիտավորությամբ ծանրանում է իր վաղեմի ծանոթ լիբերալ վաճառականի երկ-

դիմի վարքագծի վրա և դիտավորությունները բնագծում է, որ արսորավայրից վերադառնալուց հետո «Վոլգյան» նավի իր ուղեկիցներին ինքը հիշեցրել է Օդեսսոյի Բարբիկի բանաստեղծության շատ որոշակի իմաստի մասին:

Ես չէի ցանկանա այստեղ կրկնել այն դիտողությունները, որոնք նետվել են ժամանակին Շեչենկոյի գեղագիտական հայացքների կամ լիրիկոսի իդեալիստական տեսության քննադատության նվիրված տողերի մասին: Եթե նկատի առնվի «Կորզարի» շատ երգերի սոցիալական սուր բովանդակությունն ու ինտոնացիան, և անցյալի մեծ կրոնական-ժողովրդական շարժումների առթիվ նետված պատկերավոր տողերի իմաստը, ապա ակներև կդառնա, որ նույնիսկ Շեչենկոյի պոեզիայի մասին գրողը պարտավոր է հաշվի առնել մեծ պոետի երգերի, վիպականների, նկարների, նամակաների մեջ ցրված նշանակալից տրվյալների ընդհանուր հանրագումարն ու կոմպլեքսը:

Սխալ կլինե՞ր կտրել միմյանցից առանձին «տվյալները» և մեխանիկորեն կտրատված տողերը կամ պատահական պարբերությունները դարձնել հենակետեր շուտափույթ և մակերևային եզրակացությունների համար: Անհրաժեշտ է միշտ նկատի ունենալ, որ «Օրագրի» բոլոր մասերն ու էջերը կապված են թե՛ միմյանց հետ, թե՛ երգերի ու պոեմների մեջ ցրված պատկերների ու կերպարների, և թե՛ մեծ գրողի իմաստալից գրավյուրների գաղափարական բովանդակության ու հատկանշական մոտիվների հետ:

Բռնակալներին ու ցարերին մոլեգնորեն անիծող, լեհ կալվածատերերին դատափետող Շեչենկոն կռվի է ելել հին աշխարհի բոլոր բռնակալների ու իշխանների դեմ:

Միաժամանակ նա միշտ շեշտել է, որ իր բարեկամներն են ուս առաջավոր գործիչներն ու լեհ հեղափոխական մտածողները: Նորագույն աղբյուրները և գիտական հետազոտությունները հաստատում են, որ բոլոր ժողովուրդների առաջավոր մշակույթի ներկայացուցիչների համար նույնպես հանճարեղ ուկրաինական գրողը եղել է միշտ հարազատ ու սիրելի գրող:

Ծառանալով հին աշխարհի սև ուժերի դեմ Շեչենկոն, ինչպես հայտնի է, առանձին զգացումով է արձագանքել անցյալի կրոնական-ժողովրդական շարժումներին և ակնածանքով է նշել Մյունխենի, Յան Գուտի և կրոնական կեղևով սքողված սոցիալական հոսանքների ուտոպիստ-դեկավարների դերը:

Նորագույն փաստական տվյալներն այնքան կարևոր և նոր էջեր են լուսաբանում, որ այսօր առանձնապես վճռական հարված են հասցնում Շեչենկոյի հումանիստական մտահայեցությունը սխալ կերպով լուսաբանող բոլոր կեղծ գիտնականներին: Նորագույն վավերագրերի պարզորոշ խոսքը շատ որոշակի իմաստ ունի:

Ոչ մի բանասեր և պատմաբան չի կարող անուշադրությամբ մոտենալ շեշտված վավերագրերին:

Եթե այդ վավերագրերից հետո մենք անցնենք Շեչենկոյի կյանքի և գործի էջերը նկարագրող առանձին գործիչների մեմուարներին կտեսնենք, որ այդ գործիչները նույնպես բացահայտել են ամենից առաջ մեծ հումանիստ-մտածողի դիմաստվերի բարձր գաղափարական հատկանիշները:

Երբ նեղր դերասան Օլրիշը գալիս է Ռուսիա նրա ամենամոտիկ բարեկամն է դառնում Շեչենկոն: Օլրիշի պորտրեն և ապա Յունգեյի մեմուարները, իհարկե, թելադրում են առանձին ուշադրությամբ մոտենալ երկու ժողովուրդների ներկայացուցիչների նշանակալից սրտագին բարեկամությանը:

Շեքսպիրյի երգերն ու նկարները, նրա կապերն ու հարաբերությունները, մտերիմ մոտեցումը հեղափոխական մտածողներին, աքսորական-սալդաթներին, աշխատավոր ռանչպարներին, արևելյան ճնշված ժողովուրդներին ցույց են տալիս, որ մոլեզնորեն ծառանալով ընդգեմ ցարական դեսպոտիայի, նա ակտիվորեն ձայնակցում էր մեծ հեղափոխական-դեմոկրատներին—Դոբրոլյուբովի ու Զերնիշևսկու մարտական պատգամներին: Մեծ ժողովրդական գրողի մտահայեցողության բարդ էվոլյուցիան նկարագծող բանասերները կանգ են առել նաև նրա միամիտ անուրջների ու մտորումների վրա: Սակայն միևնույն այդ բանասերները նշել են, որ բյուր անեծքներ ուղղելով հին աշխարհին և կոչ անելով համախմբվել ազատագրական մեծ պայքարի համար, բանաստեղծը համակված կենսատենչ և հեղափոխական հայեցողյամբ երգել է լուսավոր ապագայի հեռանկարը.

«Կկենդանանան դաշտերն ու լճերը, ազատ ու սուրբ ուղիներ կտարածվեն և իշխանավորները չեն գտնի այդ ուղիները, իսկ ստրուկները դեպի այդ ուղիները կուղևորվեն միասին և համախմբված, առանց աղմուկի, առույգ և կենսուրախ, և զվարթ դաշտեր կդառնան ամայի անապատները»:

Այսպես է նկարագրել Տարաս Շեքսպիրն ազատագրված ժողովուրդների ապագան իր կյանքի ամենածանր օրերին: Բարի խոսքն ու ջերմ բարեկամությունը, ժողովուրդների եղբայրությունը մեծարող մեծ իմաստասեր-բանաստեղծը կովի է ելել դաժան տարիների բռնակալների դեմ: Գրիչը եղել է սուր նրա համար, իսկ արվեստն ու գրականությունը, գիտությունն ու մշակույթը ուժգին զենքեր:

Այսպես է ընկալվում այսօր ազատասեր ու խաղաղասեր բոլոր ժողովուրդների կողմից ուկրաինական մեծ հումանիստ-մտածող Շեքսպիրը:

А. Б. Каринян

ПАМЯТИ ВЕЛИКОГО МЫСЛИТЕЛЯ-ГУМАНИСТА ШЕВЧЕНКО

Р е з ю м е

В докладе А. Б. Кариняна указывается, что для характеристики многогранного мировоззрения Т. Г. Шевченко необходимо внимательно изучить не только песни и поэмы, но и страницы биографий и всех опубликованных до сего времени источников. Так, например, замечательные гравюры и офорты, тематика тысячи с лишним рисунков вносят в понимание жизни и творчества великого поэта-художника много нового, как и данные и факты, имеющиеся в рисунках и письмах, в его известном «Дневнике». Темы многих рисунков перекликаются с «мотивами» песни нередко столь отчетливо, что диктуют читателю отметить пронизанные скорбью пейзажи угнетенной родины, изображения ссыльных-солдат и арестантов-узников, и овеянные чувством глубокого сочувствия портреты-рисунки детей-казахов. Наконец, опубликованные в мемуарах и исследованиях данные о связях Шевченко с революционными демократами 50—60-х гг., а также многие примечательные страницы его «дневника» — устанавливая активный интерес к мастерам искусства, творчеству Гольбейна, Дюрера, Рембранда, к гравюре и реалистическому искусству, к жизни и судьбам гуманистов и бунтарей революционеров, рисуют замечательные черты великого гуманиста-мыслителя.